# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

42ԱԴԳՀԱՊՁԲ-21/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով ***գույքի (դպրոցական և գրասենյակային կահույք)*** գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

**Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 25.10.2021թ. ժամը 13:15-ին**

**Մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Է. Թումանյան
Հանձնաժողովի անդամ՝ Մ. Նավասարդյան
Ա. Կարապետյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Հակոբյան
<<Ֆոտոն>> ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Գայանե Երանոսյանը
Սամվել Գրիգորյան Ա/Ձ-ի լիազորված ներկայացուցիչ Աննա Ավագյանը

**1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.**

1.1 42ԱԴԳՀԱՊՁԲ-21/1 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել

**2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

2.1 42ԱԴԳՀԱՊՁԲ-21/1 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները | Էլ. Հասցեները |
|---|---|---|
| 1 | <<Ֆոտոն>> ՍՊԸ | ms.foton2014@mail.ru |
| 2 | Ա/Ձ Սամվել Գրիգորյան | aanyut6@mail.ru |
| 3 | <<Առկտուր>> ՍՊԸ | sss.arktour@gmail.com |
| 4 | <<Լեվան> ՍՊԸ | levanllc@mail.ru |

**3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

**4. Տվյալներ հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

**5. Մասնակիցների առաջարկած գները.**

| Չափաբաժին | Նախահաշվային գինը, ՀՀ դրամ | Մասնակցի անվանումը | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | <<Ֆոտոն>> ՍՊԸ | | Ա/Ձ Սամվել Գրիգորյան | | <<Առկտուր>> ՍՊԸ | | <<Լեվան> ՍՊԸ | |
| | | Առաջարկված գինը, ՀՀ դրամ | | | | | | | |
| | | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ |
| 1 | 1 650 000 | 1 500 000 | 1 800 000 | 1 642 500 | 1 642 500 | - | - | - | - |
| 2 | 750 000 | 609 042 | 730 850 | - | - | - | - | - | - |
| 3 | 100 000 | 74 308 | 89 170 | - | - | 152 500 | 183 000 | - | - |
| 4 | 450 000 | 625 000 | 750 000 | - | - | 1 260 000 | 1 512 000 | - | - |
| 5 | 120 000 | 173 333 | 208 000 | - | - | - | - | - | - |
| 6 | 390 000 | 625 000 | 750 000 | - | - | - | - | 600 000 | 720 000 |
| 7 | 224 000 | 400 000 | 480 000 | - | - | - | - | - | - |
| 8 | 600 000 | 833 333 | 1 000 000 | - | - | - | - | - | - |

**6. Տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**

6.1 Մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին,

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

**7. Գնման գործընթացի բանակցությունների կազմակերպման վերաբերյալ**

**7.1** Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.17թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը և հաշվի առնելով, որ նիստին ներկա է <<Ֆոտոն>> ՍՊԸ-ի ներկայացուցիչը, վերջինիս կողմից հայտով ներկայացված 5-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների համար գների նվազեցման նպատակով կազմակերպել բանակցություն՝ յուրաքանչյուր չափաբաժնի համար սահմանելով 2 րոպե տևողությամբ ժամանակ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

**7.2** Միաժամանակյա բանակցությունների վարման համար սահմանված վերջնաժամկետի ավարտին <<Ֆոտոն>> ՍՊԸ-ի կողմից նոր գնային առաջարկ չներկայացվեց, ուստի վերջինիս գները 5-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով թողնել անփոփոխ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

**8. Գնահատման գործընթացի կասեցման և բանակցությունների կազմակերպման վերաբերյալ**

8.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.17թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և 4-րդ չափաբաժնի համար <<Ֆոտոն>> ՍՊԸ-ին և <<Առկտուր>> ՍՊԸ-ին, 6-րդ չափաբաժնի համար <<Ֆոտոն>> ՍՊԸ-ին և <<Լեվան> ՍՊԸ-ին հրավիրել հայտով ներկայացված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների ս.թ. հոկտեմբերի 28-ին ժամը 13:00-ին, ք. Երևան, Մաշտոցի 5/2 հասցեում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

**Գնահատող հանձնաժողովի բանակցությունների կազմակերպման նիստը շարունակվեց 28.10.2021թ. ժամը 13:00-ին**

**Մասնակցում էին՝**
Հանձնաժողովի նախագահ՝ Է. Թումանյան
Հանձնաժողովի անդամ՝ Մ. Նավասարդյան
Ա. Կարապետյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Հակոբյան
**Բացակայում էին**
<<Ֆոտոն>>, <<Առկտուր>> և <<Լեվան>> ՍՊԸ-ների ներկայացուցիչները

**10. Գնման գործընթացին հայտ ներկայացրած մասնակցի հետ միաժամանակյա բանակացությունների վարման մասին**

10.1 <<Ֆոտոն>>, <<Առկտուր>> և <<Լեվան>> ՍՊԸ-ների ներկայացուցիչների բացակայության պատճառով վերջիններիս հայտով ներկայացրած գները 4-րդ և 6-րդ չափաբաժինների համար թողնել անփոփոխ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

**11. Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.**

11.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից՝

**<u>Առաջին տեղ զբաղեցրած ընտրված մասնակից ճանաչել՝</u>**

1-ին չափաբաժնի համար՝ Ա/Ձ Սամվել Գրիգորյանին;
2-րդ չափաբաժնի համար՝ <<Ֆոտոն>> ՍՊԸ-ին;
3-րդ չափաբաժնի համար՝ <<Ֆոտոն>> ՍՊԸ-ին

**<u>Երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝</u>**

1-ին չափաբաժնի համար՝ <<Ֆոտոն>> ՍՊԸ-ին;
3-րդ չափաբաժնի համար՝ <<Առկտուր>> ՍՊԸ -ին;

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

11.2 Հաշվի առնելով սույն արձանագրության 7.2 կետը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.17թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի է) պարբերությունը՝ մերժել <<Ֆոտոն>> ՍՊԸ-ի հայտը 5-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների համար՝ հրավերով սահմանված պահանջներին չբավարարելու հիմքով:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

11.3Հաշվի առնելով սույն արձանագրության 10,1 կետը, մերժել <<Ֆոտոն>>և <<Առկտուր>> ՍՊԸ-ների հայտերը 4-րդ չափաբաժնի, և <<Ֆոտոն>>և <<Լեվան>> ՍՊԸ-ների հայտերը 6-րդ չափաբաժինների համար, հրավերով սահմանված պահանջներին չբավարարելու հիմքով/գնային առաջարները գերազանցել են նախահաշվային գները/:

*Ընդունվել է որոշում՝ կողմ3, դեմ 0:*

**12. Գնահատման արդյունքների մասին.**

12.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը՝ գնման գործընթացը 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ հայտերից ոչ մեկը հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

12.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և ընտրված մասնակիցներին անգործության ժամկետի ավարտից հետոներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

Գնահատող հանձնաժողով՝

------- Է. Թումանյան/ նախագահ/

-------Մ. Նավասարդյան

------- Ա. Կարապետյան

------- Ա.Հակոբյան /քարտուղար/